

րոսխօսութիւնս, գարշաբանութիւնս, դատարկարանութիւնս » (135): Ոմանք ալ, յատկապէս կատակք կոչուած (անդ. Փաւս. 48) կամ հոգկատակք¹ (Ոսկ. Թղթ. Ա, 851. Մտթ. Ա, 693), խելացնոր շարժումներով կը ջանային զուարճացնել հանդիսականքը: Պէտք է ողբալ, կը յարէ Մանդակունին, « զկատակսն մտակորոյս », որ լկտի բազմականաց մէջ « իբրեւ զայսահարս յափրին, ծռին, գելուն, արսոտեն »: Եւ մի եւ նոյն ժամանակ զիրար կամ զայլս կը նախատէին խեղկատակօրէն: « Զամենեսեան, կը յաւելու նա, աղտով բերանոյն զազրացուցանեն. եւ զոմանս հայհոյէ, զոմանս բամբասէ, զոմանս թրշնամանէ եւ զոմանս ձաղէ » (135): Ու մեր վեհափառ թագաւորը եւ ազնուագարմ իշխաններն՝ ի տես այդ յիմարութեանց « թալացեալ էին ի ծաղուէ », ինչպէս հոս ալ կրնար կրկնել Փաւստոս (69): Անշուշտ նոյն էր հոովմէական գինարբութեանց մէջ յիշուած կատակերգուաց, միմոսից ու խեղկատակաց պաշտօնն ալ (Դար. Ա, 1374), որոցմէ չէին զանազաներ Բիւզանդիոնի « խեղակատակք » կամ « ծաղրածուք », ու

1. Այդպէս ըստ բնիկ իմաստին, եւ ըստ կազմութեան՝ հայ լեզուին յատուկ, կը գործածուէր նաեւ շնթողի իմաստով (Փրպ. 511, '13. Ոսկ. Մտթ. Ա, 57):